



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆ

ԴԱՏԱԿԱՆ ԿԱԶՄԻ ՈՐՈՇՈՒՄ

ԱՆՀԱՏԱԿԱՆ ԴԻՄՈՒՄԻ ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Քաղ. Երևան

22 հունիսի 2021 թ.

Սահմանադրական դատարանի դատական կազմը՝

Նախագահությամբ՝	Ա. Խաչատրյանի
Անդամակցությամբ՝	Վ. Գրիգորյանի
	Ա. Թունյանի

Քննության առնելով Սրբուհի Հովհաննիսյանի անհատական դիմումի
ընդունելիության հարցը,

Պ Ա Ր Ձ Ե Ց .

1. Սրբուհի Հովհաննիսյանը (ներկայացուցիչ՝ Ա. Վարդապետյան) դիմել է Սահմանադրական դատարան (դիմումը Սահմանադրական դատարան է մուտքագրվել 2021 թվականի հունիսի 4-ին)՝ խնդրելով.

«ՀՀ կառավարության 2018թ. հունիսի 27-ին N 707-Ն որոշումն այնքանով, որքանով որ այն չի նախատեսում թմրամիջոց և հոգեմետ նյութ պարունակող դեղերի ցանկը, ճանաչել ՀՀ Սահմանադրության 79-րդ հոդվածին հակասող և անվավեր»:

2. Դիմողը նշում է, որ Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշմամբ չի սահմանվել Հայաստանի Հանրապետությունում հսկման ենթակա թմրամիջոցներ և հոգեմետ նյութեր պարունակող դեղերի ցանկը, ինչը, ըստ դիմողի, «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 16-րդ կետի համաձայն՝ ենթակա է սահմանման առանձին նորմատիվ իրավական ակտով:

Ըստ դիմողի՝ վերոգրյալից հետևում է, որ Կառավարության որոշումը ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարված լինելն ապացուցված համարելու տեսանկյունից կարող է Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության չափանիշին բավարարող նորմատիվ իրավական ակտ գնահատվել միայն այն դեպքում, երբ անձը պահել է, ինքնին, թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ, այլ ոչ թե թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղամիջոց:

Դիմողը գտնում է, որ այն դեպքում, երբ անձը պահել է թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղամիջոց, ապա այդ անձի կողմից ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված արարք կատարված լինելն ապացուցված համարելու տեսանկյունից Սահմանադրության 79-րդ հոդվածով ամրագրված իրավական որոշակիության չափանիշին բավարարող նորմատիվ իրավական ակտ կարող է գնահատվել ոչ թե Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշումը, այլ՝ «Դեղերի մասին» ՀՀ օրենքի 3-րդ հոդվածի 16-րդ կետի հիմքով պարտադիր կերպով պետության կողմից ընդունման ենթակա՝ թմրամիջոց կամ հոգեներգործուն նյութ պարունակող դեղերի և դեղանյութերի ցանկը:

3. Ելնելով դիմումի և կից ներկայացված դատական ակտերի ուսումնասիրությունից, ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29 և 69-րդ հոդվածների պահանջներով՝ Սահմանադրական դատարանի

դատական կազմը գտնում է, որ սույն անհատական դիմումով գործի քննությունը ենթակա է մերժման՝ դիմումն ակնհայտ անհիմն լինելու պատճառաբանությամբ:

Այսպես՝ թիվ ՇԴ/0052/01/20 քրեական գործով դատական ակտերի ուսումնասիրությունից երևում է, որ դիմողին մեղադրանք է առաջադրվել ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածի 3-րդ մասով՝ առանց իրացնելու նպատակի առանձնապես խոշոր չափերով թմրամիջոցների կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ապօրինի շրջանառության համար, որը դրսևորվել է նրանում, որ դիմողը, չունենալով բժշկական նպատակներով կամ բժշկի նշանակմամբ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի շրջանառություն իրականացնելու՝ թմրամիջոց և հոգեմետ (հոգեներգործուն) նյութ ձեռք բերելու և պահելու թույլտվություն, իր անձնական օգտագործման համար առանց իրացնելու նպատակի, ապօրինի ձեռք է բերել և պահել խոշոր չափերի՝ 0.75 գրամ կոդեին տեսակի թմրամիջոց պարունակող 15 հատ ամբողջական դեղահաբեր, խոշոր չափերի՝ 0.285 գրամ դիագեպամ տեսակի հոգեմետ նյութ պարունակող 57 հատ ամբողջական դեղահաբեր և առանձնապես խոշոր չափերի՝ 54.1 գրամ պրեգաբալին տեսակի հոգեմետ նյութ պարունակող 249 հատ ամբողջական դեղապատիճներ, դրանք ապօրինի պահելով իր բնակության վայրում, մեքենայում և աշխատասենյակում:

Դիմողը գտնում է, որ հարկ է տարբերակել թմրամիջոցը և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութը թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղամիջոցից, և, այս առումով, բարձրացնում է օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշության խնդիր:

Վերոգրյալի կապակցությամբ Սահմանադրական դատարանի դատական կազմը արձանագրում է.

նախ, ՀՀ քրեական օրենսգրքի 268-րդ հոդվածը չի տարբերակում և դրանով իսկ նույնացնում է թմրամիջոցը և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութը և թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղամիջոցը, քանի որ օրենսդրի նպատակը թմրամիջոցի և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ապօրինի շրջանառությունը կանխելն է, որպիսի պայմաններում էական չէ

թմրամիջոցի և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ֆիզիկական ձևը՝ դեղահա՛րթ թե՛ այլ ձևի պատրաստուկ,

Երկրորդ, Կառավարության 2018 թվականի հունիսի 27-ի N 707-Ն որոշման նպատակը չէ տարբերակելու թմրամիջոցը և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութը թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղամիջոցից, քանի որ Կառավարության քննարկվող որոշումն ուղղված է, ի թիվս այլնի, թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մանր, զգալի, խոշոր և առանձնապես խոշոր չափերը սահմանելուն՝ անկախ թմրամիջոցի և հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ֆիզիկական ձևից,

Երրորդ, «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի ցուցակներում ներառված **թմրամիջոցները** և հոգեմետ (հոգեներգործուն) **նյութերը** բժշկական նպատակներով բաց են թողնվում դեղատոմսերով, ինչից բխում է, որ «Թմրամիջոցների և հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի մասին» ՀՀ օրենքի իմաստով ևս օրենսդիրը նույնացնում է թմրամիջոցը և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութը և թմրամիջոց և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութ պարունակող դեղամիջոցը, ինչը մեկ անգամ ևս վկայում է այն մասին, որ օրենսդրությամբ թմրամիջոցի և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ապօրինի շրջանառությունը կանխելու համար էական չէ թմրամիջոցի և/կամ հոգեմետ (հոգեներգործուն) նյութի ֆիզիկական ձևը:

Վերոգրյալից բխում է, որ տվյալ դեպքում առկա չէ օրենսդրական բացով պայմանավորված իրավական անորոշություն, հետևաբար՝ սահմանադրաիրավական վեճ:

Ելնելով վերոշարադրյալից և ղեկավարվելով «Սահմանադրական դատարանի մասին» սահմանադրական օրենքի 29-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով և 69-րդ հոդվածի 5-րդ մասով՝ Սահմանադրական դատարանի դատական կազմը

Ո Ր Ո Շ Ե Ց .

Սրբուհի Հովհաննիսյանի անհատական դիմումով գործի քննությունը մերժել:

Նախագահող՝
Անդամներ՝



Ա. Խաչատրյան
Վ. Գրիգորյան
Ա. Թունյան

22 հունիսի 2021 թվականի
ՍԴԴԿՈ-41